

## «ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի  
գիտական խորհրդի 13.12.2018թ. թիվ 8 նիստում:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի  
գիտական խորհրդի նախագահ,  
ոստիկանության գեներալ-մայոր

Մ. Բաբայան

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_ 2018թ.

## Կ Ա Ր Գ

### ՀՀ ոստիկանության կրթահամալիրի «Լավագույն սովորող» մրցույթի կազմակերպման և անցկացման

#### I. Ընդհանուր դրույթներ

1. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի «Լավագույն սովորող» (այսուհետ՝ «Լավագույն սովորող») մրցույթի կազմակերպման և անցկացման կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է մրցույթի կազմակերպման և անցկացման գործընթացը:
2. «Լավագույն սովորող» մրցույթը կազմակերպվում է տարին 1 անգամ՝ հիմք ընդունելով նախորդ 2 կիսամյակների արդյունքները:
3. «Լավագույն սովորող» մրցույթի նպատակն է խրախուսել կրթահամալիրում սովորողների առաջադիմությունը, հետազոտական և հասարակական ակտիվությունը, կարգապահությունը: Մրցույթի արդյունքները ամփոփվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին՝ սեպտեմբերի վերջին տասնօրյակում:
4. «Լավագույն սովորող» մրցույթն անցկացվում է կրթահամալիրի ակադեմիայի և քոլեջի սովորողների համար: Ակադեմիայից լավագույն սովորող է ընտրվում վճարովի և անվճար ուսուցմամբ սովորողներից մեկական սովորող: Քոլեջից լավագույն սովորող է ընտրվում սույն կարգի պահանջներին համապատասխան:

#### II. «Լավագույն սովորող» մրցույթի հանձնաժողովի կազմը և գործունեությունը

5. «Լավագույն սովորող» մրցույթի կազմակերպման և անցկացման նպատակով ստեղծվում է հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):
6. Հանձնաժողովի կազմի մեջ են մտնում.
  - 1) ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալը (հանձնաժողովի նախագահ),
  - 2) Կրթահամալիրի ծառայության բաժնի պետի տեղակալը,
  - 3) Ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետի տեղակալը,
  - 4) Կրթահամալիրի ակադեմիայի և քոլեջի պետի տեղակալները,
  - 5) Կրթահամալիրի կադրերի և ԱՀՏԱ բաժնի պետի տեղակալը,

- 6) ուսանողական խորհրդի նախագահը,
- 7) Կրթության որակի ապահովման բաժանմունքի ներկայացուցիչը:
7. Հանձնաժողովի անվանական կազմը և քարտուղարը հաստատվում է Կրթահամալիրի պետի հրամանով:
8. Համապատասխան ընթացակարգով ներկայացված թեկնածուներից լավագույնի ընտրության համար Հանձնաժողովը որոշում է մրցույթի հայտարարման օրը և ժամը և առնվազն 3 օր առաջ իրազեկում է անձնակազմին:
9. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների 2/3-ը:
10. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ և հրապարակման ենթակա չեն:
11. Հանձնաժողովը իրավասու է ստուգելու «Լավագույն սովորող» մրցույթի համար ներկայացված հայտերի և փաստաթղթերի իսկությունը:

### **III.«Լավագույն սովորող» մրցույթին թեկնածուների առաջադրման կարգը**

12. «Լավագույն սովորող» մրցույթի անցկացման օրվանից առնվազն 20 օր առաջ Հանձնաժողովի քարտուղարը ֆակուլտետների պետերին է ուղարկում մրցույթի թեկնածու (Այսուհետ՝ թեկնածու) ներկայացնելու վերաբերյալ հայտը (ձև 1),
13. «Լավագույն սովորող» մրցույթի թեկնածուները հաստատվում են համապատասխան ֆակուլտետի խորհրդի նիստով:
14. Թեկնածուի ներկայացման վերաբերյալ հայտը ստանալուց ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում ֆակուլտետի խորհուրդն «Լավագույն սովորող» մրցույթի հանձնաժողովին ներկայացնում է մրցույթին հավակնող թեկնածուների ցանկը, ովքեր առնվազն նախորդ 2 կիսամյակներում հանդիսացել են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի սովորող, նախորդ 2 կիսամյակում ցուցաբերել են գերազանց առաջադիմություն և չունեն գործող կարգապահական տույժեր:
15. Ֆակուլտետի պետը թեկնածուի ներկայացման վերաբերյալ հայտի հետ Հանձնաժողովի քարտուղարին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝
  - 1) քաղվածք ֆակուլտետի խորհրդի նիստի արձանագրությունից սովորողի թեկնածության ներկայացման վերաբերյալ,
  - 2) հիմնավորված միջնորդագիր՝ հաստատված համապատասխան ուսումնական ստորաբաժանման պետի կողմից,
  - 3) սովորողի ակադեմիական տեղեկանքը:
16. Կարգի 14-րդ կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովը ֆակուլտետների կողմից ներկայացված «Լավագույն սովորող» մրցույթի թեկնածուների ցուցակը լուսաբանում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կայքում:

### **IV. «Լավագույն սովորող» մրցույթին թեկնածուների ընտրության չափորոշիչները և գնահատման կարգը**

17. Հանձնաժողովը «Լավագույն սովորող» մրցույթի հաղթողին ընտրում է հաշվի առնելով հետևյալ չափանիշները.
  - 1) ուսման առաջադիմությունը,
  - 2) գիտահետազոտական աշխատանքներ կատարելու ունակությունը,
  - 3) ուսանողական հասարակական ակտիվությունը,

4) վարքը:

18. Ներկայացված թեկնածուի ուսման առաջադիմությունը գնահատվում է 8-10 միավորով՝ հաշվի առնելով նախորդ 2 կիսամյակներում բացառապես գերազանց առաջադիմություն (ակադեմիայում՝ ՄՈԳ-ի 18, 19, 20 միավորների դեպքում՝ համապատասխանաբար 8, 9, 10 գնահատման միավոր, իսկ քոլեջում՝ թվային միջինի հաշվարկով 9, 10 արդյունարար միավորի դեպքում՝ 9-10 գնահատման միավոր) ունեցող սովորողի ՄՈԳ-ի արդյունքը.
19. Ներկայացված թեկնածուի գիտահետազոտական աշխատանքներ կատարելու ունակությունը գնահատվում է 5, 6 և 8 միավորով.
  - 1) 5 միավոր ստանում է այն թեկնածուն, ով մասնակցել է ներբուհական գիտաժողովներին, սեմինարներին, ֆորումներին զեկույցով և/կամ որի հոդվածը տպագրվել է տվյալ միջոցառման արդյունքներով:
  - 2) 6 միավոր ստանում է այն թեկնածուն, ով մասնակցել է հանրապետական կամ միջբուհական գիտաժողովներին, սեմինարներին, ֆորումներին զեկույցով և ունի տվյալ թեմայով հրատարակված հոդված (ներ) հապատասխան միջոցառման կամ այլ հրատարակվող ժողովածուում (պարբերականում),
  - 3) 7 միավոր ստանում է այն թեկնածուն, ով մասնակցել է միջազգային գիտաժողովների, սեմինարների, ֆորումների զեկույցով և/կամ որի հոդվածը տպագրվել է տվյալ միջոցառման արդյունքներով:
  - 4) 8 միավոր ստանում է այն թեկնածուն, ով ունի հրատարակված հոդված միջազգային գիտական ամսագրում, կամ մրցանակային տեղ է զբաղեցրել տարատեսակ մրցույթներում, օլիմպիադաներում կամ նմանատիպ միջոցառումների ընթացքում:
20. Հետազոտական աշխատանքի առկայության դեպքում թեկնածուին տրվում է 5 միավոր, եթե այդ աշխատանքը կատարվել է նախապես հաստատված պլանով և ունեցել է համապատասխան ղեկավար:
21. Թեկնածուն ստանում է 5 մավոր, եթե նա հասարակական կարգի պահպանության ծառայության համար արժանացել է խրախուսանքի:
22. 8 միավոր ստանում է այն թեկնածուն, ով ուսման ընթացքում մասնակցություն է ունեցել հանցագործության բացահայտմանը կամ հետախուզվողի հայտնաբերմանը:
23. Ներկայացված թեկնածուի հասարակական ակտիվությունը գնահատվում է 1-5 միավորով: Հասարակական ակտիվության տակ անհրաժեշտ է հասկանալ սովորողի մասնակցությունը հասարակական գործունեությանը, ուսանողական տարբեր խմբակների աշխատանքներին, ինտելեկտուալ, սպորտային, մշակութային և այլ միջոցառումներին:
24. Սովորողի վարքի գնահատման չափանիշ է տույժի բացակայությունը, որը հավաստում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կադրային ստորաբաժանման կողմից տրամադրվող տեղեկանքով:
25. Միավորների հավասարության դեպքում առավելությունն ըստ հաջորդականության տրվում է Կարգի 18 և 19-րդ կետերով նախատեսված չափանիշներին:
26. «Լավագույն սովորող» մրցույթի հաղթողի վերաբերյալ Հանձնաժողովը կայացնում է որոշում, որի հիման վրա կրթահամալիրի պետի հրամանով ճանաչվում են տվյալ տարվա քոլեջի և ակադեմիայի «Լավագույն սովորող» մրցույթի հաղթողները:  
Հաղթողի անունը հրապարակվում է հանդիսավոր պայմաններում: Հաղթողը պարգևատրվում է պատվոգրով և հուշամեդալով՝ նախատեսված «Լավագույն սովորող» ամենամյա մրցույթի հաղթողների համար: Հաղթողը կարող է

արժանանալ նաև այլ խրախուսանքների: Հաղթողները ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի հրամանով ընդգրկվում են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի կազմում:

#### **V. Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների բողոքարկման կարգը և ժամկետները**

27. Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները կարող են բողոքարկվել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետին՝ գրավոր զեկուցագրի (դիմումի) հիման վրա՝ վերջնական որոշումը հրապարակելուց հետո՝ եռօրյա ժամկետում:
28. Խախտումներ հայտնաբերելու դեպքում՝ կրթահամալիրի պետը անվավեր է ճանաչում Հանձնաժողովի որոշումը և 10-օրյա ժամկետում նշանակում է նոր մրցույթ:
29. Նոր մրցույթն անցկացվում է սույն կարգին համապատասխան:

Համաձայն եմ

Ֆակուլտետի պետ \_\_\_\_\_

**«Լավագույն սովորող» մրցույթին մասնակցության հայտ**

Անուն, Ազգանուն, Հայրանուն	
Ծննդյան ամսաթիվ, տարեթիվ, հեռախոս, Էլ. հասցե	
Ուսումնական ստորաբաժանում	
Ֆակուլտետ	<input type="checkbox"/> Վճարովի <input type="checkbox"/> անվճար Կուրս _____
Առաջադիմություն /ՄՈԳ/, վարք	
Հասարակական ակտիվություն՝ ուսանողական գիտական խմբակներ, ինտելեկտուալ, սպորտային, մշակութային և այլ միջոցառումներ	
Գիտահետազոտական աշխատանքներ՝ Ներբուհական, միջբուհական, միջազգային կոնֆերանսներ, ֆորումներ, սեմինարներ, դասընթացներ, գիտաժողովներ, մրցույթներ, օլիմպիադաներ և այլն	

Հայտատու՝ \_\_\_\_\_ / \_\_\_\_\_ /  
 (Անուն, ազգանուն, հայրանուն)